ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԿՈՒՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գեղարքունիքի մարզ
գ. Բերդկունք
էլ. փոստ berdkunq.gegharquniq@mta.gov.am

ՔԱՂՎԱԾՔ ՈՐՈՇՈՒՄԻՑ

«16» հունվարի 2019 թվականի թիվ 4

2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԵՐԻ,ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ, 19-րդ և 20-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի՝4-րդ և 5-րդ , 11-րդ հոդվածի կետերը և 12-րդ հոդվածի 1-ին կետի ա/,գ/ ենթակետի,3-րդ,6-րդ,12-րդ կետի բ/ ենթակետի ու աղբահանության և սանիտարական մաքրման մասին օրենքի պահանջները՝համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Բերդկունք համայնքի 2019թ. տեղական տուրքերի և վճարների հետևյալ տեսակները և դրույքաչափերը.
1.1/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի,շինությունների(ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է՝
հիմնական օբյեկտների համար `
ա/ մինչև 300ք/մ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200ք/մ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝տաս հազար ՀՀ դրամ:
ոչ հիմնական շինությունների տեղադրման համար
գ/ մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեք հազար ՀՀ դրամ
դ/ 20 և ավել քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հինգ հազար ՀՀ դրամ
1.2/ Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ

1.3 Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի առևտրի կետերում վաճառքի թույլտվության համար,օրացուցային տարվա համար՝200/ երկու հարյուր/ հազար ՀՀ դրամ

1.4 Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար(մասնակիցների վճար) տեղական վճարը սահմանվում է 1000/մեկ հազար/ ՀՀ դրամ:

1.5 Համայնքի տնօրինության տակ գտնվող հողերը վարձակալության տրամադրելու դեպքում օրացուցային տարվա համար մեկ հեկտար վարելահողի համար տեղական տուրք սահմանել յոթ հազար չորս հարյուր դրամ և մեկ հեկտար արոտի վարձ՝ երկու հազար դրամ:

1.6 Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները կազմակերպելու համար սահմանել տեղական վճար հետևյալ դրույքաչափով՝բնակչությունից մեկ շնչի հաշվով գանձել 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ /հաշվարկված է 230 մարդ/ և իրավաբանական անձ համարվող ՀԱՊՀ Հիմնադրամից սզոնային վճար՝6000 /վեց հազար/ ՀՀ դրամ ամիսը,ընդամենը 2ամիս՝12 /տասներկու/ հազար ՀՀ դրամ :

2. Սույն որոշում ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԱԲԿԵՆ ԴԱԴԻԿՅԱՆ